ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՒԼԵՐԸ

ՍԱՐԳՍՅԱՆ Դ. Ն.

Ուրարտական պետության պատմության պարբերացումն ունեցել է 4 գլխավոր փուլեր: Առաջինը սկսվել է Ուրարտուի պատմական ասպարեզ մտնելու արշալույսից, երբ այդ պետության գլուխ կանգնած էր նրա առաջին թագավոր Արամեն (859-832)[1]: Այդ փուլի բնորոշ գիծն այն էր, որ դրա ընթացքում ուրարտական պետությունը սահմանափակված էր իր բուն տարածքի ու բնակչության շրջանակներում և ամեն կերպ ձգտում էր պաշտպանվել ասսուրական կործանարար արշավանքներից: Այն տևում է մինչև ուրարտական պետության նվաճողական արշավանքները, երբ Ուրարտուն թևակոխում է իր պատմության երկրորդ փուլը: Առաջին փուլում ուրարտական պետության տարածքը սկսվել է Արածանիի միջին ավազանի հարավային սահմաններից, տարածվել Վանա լճի հյուսիսային, արևելյան ու հարավային մասերը և հասել մինչև Ուրմիա լճի արևմտյան կողմերը: Այդ փուլում ուրարտական պետության հիմնական բնակիչներն են եղել Վանա լճից դեպի հարավ տարածված և Քաղիրթ ու Ջերմ գետերի արանքում գտնվող Ուրուրատրի ցեղամիության հետնորդները՝ ուրարտները, և Արածանիի հյուսիսային կողմում տարածված Նաիրի ցեղամիության հետնորդները՝ արմենները կամ հայերը: Ժամանակի ընթացքում, սկսած մ.թ.ա. XIII դարից, ասսուրական պետության ճնշման տակ ուրարտները շարժվել են դեպի հյուսիս և հաստատվել Վանա լճի հյուսիսային ու արևելյան կողմերում, հարավարևելյան ափերին, ինչպես նաև այդ լճի և Արածանիի միջակայքում ձգվող տարածքում: Մ.թ.ա. IX դ. սկզբին ասսուրական ճնշումն այդ ցեղերին ստիպում է համախմբվել ընդդեմ Ասորեստանի: Դրանց համատեղ ջանքերով նաիրյան ցեղերի գլխավորությամբ ստեղծվում է պետություն, որի թագավոր է հռչակվում արմենական կամ հայկական ծագմամբ Արամեն: Նա հիմնադրում է հայկական արքայատոհմ՝ սկսած մ.թ.ա. 859 թվականից: Ասորեստանցիներն իրենց երկրին սահմանակից Ուրուատրի ցեղամիության անունով այդ պետությունը կոչում են Ուրարտու, իսկ իրենք՝ ուրարտական թագավորները, ասսուրերենով գրած արձանագրություններում այն դրա հիմնադիր նաիրյան ցեղերի անունով կոչում են Նաիրի: Միայն հետագայում Ռուսա I-ը (735-713) իր ասսուրերեն արձանագրությունում այն կոչում է Ուրարտու[2]:

Առաջին փուլում ուրարտական պետությունը բաղկացած էր վարչա-տարածքային 4 միավորներից, որոնցից յուրաքանչյուրը կազմված էր մեկ

---

[1] **Дьяконов И. М.,** *Ассиро–вавилонские источники по истории Урарту (АВИИУ((Вестник древней истории (ВДИ(, М., 1951, N 2, N 27, 29).*

[2] **Меликишвили Г. А.**, *Урартские клинообразные надписи (УКН(, М., 1960, N 1-3, 319-325.*

քաղաքից և դրան շրջակա բնակավայրերից: Դրանք էին Արզաշքուն, Արամալին, Զանզիունան, Սուգունիան, որոնցից առաջին երկուսը գտնվում էին երկրի հյուսիսային մասում, ուր ապրում էին նաիրյան էթնիկ աշխարհին պատկանող արմենները կամ հայերը և, բնականաբար, վարչատարածքային այդ միավորներն ունեին հայ բնակիչներ: Դա հաստատվում է հետևյալ փաստերով: Դրանցից առաջինն այն է, որ Արամալի վարչատարածքային միավորի անվան հիմքում ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին և նրա երկրին տրվող «արմեն», «Արմենիա» անունների «արմ» արմատը: Դա թույլ է տալիս ասելու, որ Արամալի վարչատարածքային միավորի բնակիչները եղել են արմենները կամ հայերը: Արմեններով կամ հայերով է բնակեցված եղել նաև Արզաշքու վարչատարածքային միավորը, քանի որ նրա անունը ստուգաբանվում է հայերենի լեզվահիմքով (այն կազմված է հայերենի «առնուլ» բայով, «զ» նախդիրով, «աչք» (հմմտ. «աշք») արմատով (սեպագրերում «չ» տառ չի եղել, այն արտահայտվել է «շ» տառի միջոցով, և ամբողջ բառը նշանակում է «Աչքի զարնող»): Արզաշքուն եղել է նաև Արամեի արքայանիստը: Ուրարտուի մյուս երկու վարչատարածքային միավորները՝ Զանզիունուն և Սուգունիան, տարածված էին երկրի հարավային մասում, ուր ապրում էին Ուրուատրի ցեղամիության հետնորդները՝ ուրարտները: Բնականաբար, վարչատարածքային այդ միավորների բնակիչներն ունեցել են ուրարտական ծագում: Նույն ծագումն են ունեցել նաև դրանց անունները: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Արամեի անվան հիմքում նույնպես ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին և նրա երկրին տրվող «արմեն», «Արմենիա» անունների «արմ» արմատը: Այս հանգամանքը ցույց է տալիս ոչ միայն Արամեի հայկական ծագումը, այլև այն, որ նույն ծագումն են ունեցել նաև Արամեի ստեղծած արքայական դինաստիան ու գլխավորած պետությունը:

Արամեին հաջորդում է Սարդուրի I-ը (832-822), որը սերում էր ուրարտներ ցեղից և մ.թ.ա. 832 թ. հիմնադրում է այդ ցեղի արքայական դինաստիան: Այս պնդումը հաստատվում է հետևյալ փաստերով: Դրանցից առաջինը Սարդուրի I-ի, նրա դինաստիայի անդամների և նրա հայր Լութիպրիի անունների ուրարտական ծագումն է: Այսպես՝ Սարդուրի անունը կազմված է ուրարտական աստվածների պանթեոնի «Սարդի» դիցուհու անունով, Լութիպրինը՝ ուրարտերենի «լութու» (կին) և «էվրի» (տեր) արմատներով, և ամբողջ բառը նշանակում է «Տնօրենը կանանոցի» (խոսքը արքայական կանանոցի մասին է): Երևի Լութիպրին եղել է Արամեի արքայական կանանոցի տնօրենը, իսկ նրա որդին՝ զորավար: Արամեից հետո՝ մ.թ.ա. 832 թ., Արածանիի ճակատամարտում դիմակայելով ասսուրական զորքին, նա հռչակվել է երկրի թագավոր: Սարդուրի I-ի որդի Իշպուինիի անունը կազմված է ուրարտերենի «իշպուիու» (երջանիկ) արմատով և այլն: Փաստերից երկրորդը վերաբերում է ուրարտական սեպագիր արձանագրությունների լեզվին, որը տարբերվում է հայերենից և համապատասխանում է ուրարտերենին:

Թեև հայկական արքայատոհմն Արամեի մահից հետո անկում է ապրում, բայց արմենները կամ հայերը գնալով բազմանում են այդ պետության մեջ: Արամալի վարչատարածքային միավորի հիմքի վրա ձևավորվում է ուրարտական պետության կենտրոնական ու արքունի Արմարիլի-Արմարիյալի կամ Արմիրալի

մարզը, որի բնակիչները եղել են արմենները կամ հայերը: Այս պնդումը հաստատվում է այն փաստով, որ այդ մարզի անվան հիմքում նույնպես ընկած է «արմեն», «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես նշվեց Արամալի վարչատարածքային միավորի հետ կապված: Ուշագրավ է նաև այն, որ այդ մարզի քաղաքանունները ստուգաբանվում են հայերենի լեզվահիմքով: Օրինակ՝ Արբու և Արնի քաղաք անունների հիմքում ընկած են հայերենի համապատասխանաբար «արփի» (արև) և «առնա» (հաստատուն, անընկճելի) արմատները: Փաստերը հաստատում են, որ «արմեն» և «Արմենիա» անունները ծագում են Արմիրալի (Արմարիլի, Արմարիյալի, հմմտ. Արամալի) մարզի անունից: Այսպես՝ այդ մարզին տրվող Արմիրալի (Արմարիլի, Արմարիյալի) անվան «րի»-ն կամ «րա»-ն ցեղ մատնանշող ածանց է, որը Արամալի քաղաքանվան համեմատությամբ ավելացել է այդ ցեղային երկրի անվան մեջ՝ ընդգծելով այդ երկրի կամ մարզի բնակիչների «արմեններ» լինելը: Իսկ Արմիրալի տեղանվան վերջում դրված «լի» մասնիկը ուրարտերենի հոգնակի ուղղական հոլովի վերջավորությունն է, որը տեղանուններում կարող է փոխվել «նա» վերջավորությամբ: Օրինակ՝ Բիայնիլի երկրանունը հիշատակվում է նաև Բիայնա, իսկ Լուլուինիլի երկրանունը՝ Լուլուինա ձևով: Հետևաբար, Արմիրալի երկրանվան ցեղ մատնանշող «րի» կամ «րա» ածանցն անջատելուց և «լի» ածանցը «նա» ածանցով փոխարինելուց հետո ստացվում է «Արմինա» ձևը, որով կոչվել է Արմենիա երկիրը, երբ առաջին անգամ հիշատակվել է Բեհիսթունյան արձանագրության մեջ՝ որպես Ուրարտու (Ուրաշտու) անվան համարժեքություն (այստեղ Արմինա անունը վերաբերում է ամբողջ Հայկական լեռնաշխարհին, ուր կային բազմաթիվ ցեղեր, և ոչ թե մի ցեղին, թեև նրա հիմքում շարունակում է մնալ «արմեններ» ցեղի անունը):

Փաստորեն, Արմիրալի (Արմարիլի, Արմարիյալի, հմմտ. Արամալի) մարզի հետ են կապված ոչ միայն արմենների ծագումը, այլև այդ ցեղի և նրա երկրի անունները: Այս փաստը հերքում է Արմե-Շուբրիա տեսությունը, ըստ որի՝ արմեններ ցեղի և նրա երկրի անունն առաջացել են ուրարտական պետության բուն սահմաններից դուրս գտնվող խուրրիական սերմամբ Շուբրիա և արամեական ծագմամբ Արմե երկրներից ու վերջինիս անունից: Դրանցից Արմե երկիրն անկում է ապրել Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ի (764-735) նվաճումից հետո, իսկ Շուբրիան կործանվել է մ.թ.ա. 673 թ. Ասորեստանի թագավոր Ասարխադդոնի (680-669) կողմից, և երկուսն էլ չեն հասել հայ ժողովրդի կազմավորման փուլին (մ.թ.ա. VI դ.):

Ուրարտական պետության պատմության պարբերացման երկրորդ փուլը, ինչպես արդեն ընդգծվեց, սկսվել է այն ժամանակաշրջանից, երբ այդ պետությունը ձեռնարկել է նվաճողական արշավանքներ, որոնց շնորհիվ գրավել ու հարկատու է դարձրել շուրջ 130 երկրներ, որոնք ներառում էին ամբողջ Հայկական լեռնաշխարհը, ինչպես նաև անդրեփրատյան, հյուսիսմիջագետքյան և Ուրմիա լճից դեպի հարավ տարածվող շատ երկրներ: Նա դրանցից ձեռք է բերել մեծ քանակությամբ ավար ու ռազմագերիներ, հարկ ու տուրք, բարձրացրել իր քաղաքական հեղինակությունն արտաքին աշխարհում ու Ասորեստանից խլել Առաջավոր Ասիայում առաջնությունը: Այդ փուլը համընկել է Ուրարտուի թագավորներ Իշպուինիի (822-810), Մենուայի (810-786), Արգիշթի I-ի (786-764) և

Սարդուրի II-ի (764-735) ժամանակաշրջանի հետ[3]: Դա Ուրարտական պետության վերելքի փուլն էր:

Երրորդ փուլը սկսվել է մ.թ.ա. 735 թ., երբ ուրարտական պետությունը Սարդուրի II-ի կառավարման վերջում պարտվել է Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ից (745-727)[4]: Դրանից հետո արտաքին աշխարհում ուրարտական պետության քաղաքական հեղինակությունն ընկնում է, և Առաջավոր Ասիայում առաջնությունը կրկին անցնում է Ասորեստանին: Ուրարտական պետությունը բռնում է վայրէջքի ուղի: Այդ գործընթացն ավելի է խորանում մ.թ.ա. 714 թ. սկսած, երբ Ուրարտուն Ռուսա I-ի (735-713) թագավորության վերջում պարտվում է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ից (722-705)[5]: Դրանից հետո նրա վայրէջքը դառնում է անկասելի: Երրորդ փուլում Ուրարտուից անջատվում են անդրեփրատյան, հյուսիսմիջագետքյան և Ուրմիա լճից դեպի հարավ տարածվող շատ երկրներ, որոնք նվաճվել էին երկրորդ փուլում: Ուրարտուի գերիշխանության տակ է մնում Հայկական լեռնաշխարհը, որը հիմնականում բնակեցված էր հայկական ցեղերով, մասամբ նաև փոքրաքանակ ուրարտներով, որոնք բնակվում էին հատկապես երկրի հարավում:

Եթե որոշակի է, որ ուրարտական պետության պատմության պարբերացման երրորդ փուլը սկսվել է մ.թ.ա. 735 թ., երբ Ուրարտուն պարտվել է Ասորեստանից, ապա անորոշ է, թե մինչև երբ է այն տևել, քանի որ ուրարտական պետության վերջին թագավորներ Սարդուրի IV-ի, Էրիմենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարման թվականներն անորոշ են: Դրանցից հայտնի է միայն Սարդուրի IV-ի իշխելու սկիզբը, որը համընկնում է մ.թ.ա. 635 թ. հետ, երբ ավարտվել է Սարդուրի III-ի (645-635) թագավորությունը: Թե մինչև երբ է թագավորել Սարդուրի IV-ը, անորոշ է: Ուրարտուի թագավորների ժամանակագրությունները որոշվում են ասսուրական աղբյուրների օգնությամբ: Սակայն Սարդուրի IV-ի թագավորության ավարտի, ինչպես նաև նրան հաջորդող Էրիմենա, Ռուսա III և Ռուսա IV թագավորների մասին ասսուրական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ասսուրական պետությունն իր ուշադրությունը շեղել էր Ուրարտուից ու զբաղված էր կիմերա-սկյութական ցեղերով և Առաջավոր Ասիայում հանուն առաջնության պայքարի ելած Մեդիա ու Նոր-Բաբելոնյան պետություններով: Փաստորեն, Սարդուրի IV-ի, Էրիմենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի թագավորության թվականները համընկել են ասսուրական պետության անկման փուլի և դրան անմիջապես նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանների հետ:

Հայկական լեռնաշխարհի այս ժամանակաշրջանի թագավորների ժամանակագրության մասին տեղեկություններ են պահպանել ավանդությունները, որոնք տեղ են գտել Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատությունում, Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունում»:

---

[3] Նույն տեղում, N 4-263 *(допол. 14-442).*

[4] *АВИИУ, N 41-45.*

[5] Նույն տեղում, N 46-58:

Այս հարցում օգտակար են նաև պարսկական թագավորների սեպագիր արձանագրությունները, մեդական ու պարսկական թագավորների ժամանակագրությունները, ինչպես նաև բաբելոնական սեպագիր ժամանակագրությունների ու «Աստվածաշնչի» տեղեկությունները: Ըստ այդ աղբյուրների՝ ասսուրական պետության անկման փուլում (612-609) և դրան անմիջապես նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել միայն մեկ պետություն, որին ենթարկվել են այդ լեռնաշխարհի մյուս բոլոր երկրներն ու ցեղամիությունները:

Բաբելոնական սեպագիր ժամանակագրությունները, որոնք սեմական ծագում ունեցող բաբելոներենով են, այդ պետությունը համարում են Ուրաշտուն (*KUR Urašṭu*)[6], որը համապատասխանում է սեմական սերմամբ ասսուրերենով գրված սեպագիր արձանագրությունների Ուրարտու (*KUR Urarṭu*) պետությանը: Ըստ բաբելոնական ժամանակագրությունների՝ այդ պետությունը մնում է Բաբելոնի թագավոր Նաբուապալուսուրի կամ Նաբուպալասարի և Մեդիայի թագավոր Ումաքիշթարի (Հերոդոտոսի մոտ՝ Կիաքսար (625-585), Խորենացու մոտ՝ Վարբակես) նվաճումների սահմաններից դուրս և շարունակում է կանգուն մնալ ասսուրական պետության կործանվելուց հետո: Խորենացուն հասած ավանդություններն[7] այդ պետությունն անվանում են Արմենիա: Դրանք նաև տեղեկացնում են, որ Վարբակեսը (Ումաքիշթար-Կիաքսար) Արմենիայի այդ ժամանակվա թագավոր Պարույրին, որն իրեն օգնել էր ասսուրական պետության տապալման գործում (612-609), թագ է ուղարկում, այսինքն՝ ճանաչում է նրա թագավորությունը:

«Աստվածաշունչը»[8], որը սեմական ծագում ունեցող եբրայերենով է, տեղեկություն է պահպանել այն մասին, որ *’RRṬ (’RRṬ*-ն *Urarṭu*-ի բաղաձայնական արմատն է) կամ *Ararat* կոչվող թագավորությունը, որը համապատասխանում էր ասսուրական սեպագիր արձանագրությունների Ուրարտու (*Urarṭu)* և բաբելոնական սեպագիր վիմագրությունների Ուրաշտու (*Urašṭu)* պետությանը, շարունակել է իր գոյությունը Պարսկաստանի թագավոր Կյուրոս Մեծի (550-529) ժամանակ և օգնել է նրան մ.թ.ա. 539 թ. Բաբելոնի վրա արշավելիս: Խորենացուն հասած ավանդությունները *’RRṬ-Ararat-Urarṭu-Urašṭu* թագավորությունը համարում են Արմենիայի (*Armenia)* թագավորություն[9]:

Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ը (522-485) իր Բեհիսթունյան եռալեզու սեպագիր արձանագրության[10] բաբելոներեն տարբերակում հիշատակում է իր դեմ ապստամբած Ուրաշտու (ասսուրերեն՝ Ուրարտու) երկրի և նրա բնակիչների՝

---

[6] **Gadd C. J.,** *The Fall of Nineveh, London, 1923, p. 36, lin. 72; АВИИУ, N 82.*

[7] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Ե., 1961, էջ 163-168, 173-174:

[8] Աստվածաշունչ, Գիրք հին և նոր կտակարանաց, Վիեննա, 1957, *Библия (Книга ветхого и нового завета), Вена, 1957, LI, 27; АВИИУ, N 83.*

[9] **Մովսես Խորենացի**, էջ 174 (հմմտ. Սարգսյան Դ. Ն., Բիբլիական «Արարատ երկիրը»՝ ըստ սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավանդությունների, ՊԲՀ, 2003, N 4, էջ 254-260):

[10] **Weissbach F. H.,** *Die Keilinschriften der Achameniden, Leipzig, 1911, S. 8-75.*

ուրաշտների (ասսուրերեն՝ ուրարտներ) մասին: Այդ արձանագրության պարսկերեն տարբերակում Ուրաշտու կամ Ուրարտու երկրի և ուրաշտներ կամ ուրարտներ բնակիչների փոխարեն հիշատակվում են Արմինա (հունարեն՝ Արմենիա) երկիրը և արմիններ (հունարեն՝ արմեններ) բնակիչները: Այս փաստը ցույց է տալիս, որ բաբելոներենով երկիրը կոչվել է Ուրաշտու կամ Ուրարտու, իսկ նրա բնակիչները՝ ուրաշտներ կամ ուրարտներ: Հնդիրանական ծագում ունեցող պարսկերենով երկիրը կոչվել է Արմինա կամ Արմենիա, իսկ նրա բնակիչները՝ արմիններ կամ արմեններ:

Հերոդոտոսն իր «Պատմություն ինը գրքից» աշխատությունում[11], որը գրվել է հնդեվրոպական ծագում ունեցող հունարենով, նշել է, որ Դարեհ I-ը իր թագավորության սկզբում Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող բոլոր երկրների թագավորությունները վերացնելով դարձրել է պարսկական սատրապություններ, որոնց կառավարիչներ է նշանակել պարսիկ սատրապների:

Հերոդոտոսի աշխատության այդ հատվածի Արմենիա երկրանունը պետք է ընկալել նաև որպես սեմական լեզուներով ավանդված Ուրաշտու կամ Ուրարտու երկրանուն այնպես, ինչպես Դարեհ I-ի Բեհիսթունյան եռալեզու սեպագիր արձանագրության հնդիրանական ծագումով պարսկերեն տարբերակի Արմինա կամ Արմենիա երկրանունն է ընկալվել որպես սեմական սերմամբ բաբելոներենով ավանդված տարբերակի Ուրաշտու կամ Ուրարտու երկրանուն: Այդպես պետք է ընկալել նաև Քսենոփոնի հունարենով և Խորենացու հայերենով գրված աշխատությունների Արմենիա երկրանունը: Այդ են հաստատում Խորենացուն հասած ավանդությունների փաստերը՝ կապված Ուրարտուի առաջին թագավոր Արամեի կամ Արամի հետ, որին այդ ավանդությունները համարում են Արմենիայի թագավոր՝ արմատական կապ տեսնելով Արամեի կամ Արամի անվան և Արմենիա երկրանվան միջև: Այդ է հաստատում Ուրաշտուի կառավարիչ Շամեշ–Բարաքուի մ. թ. ա. 415 թ. սեպագիր բաբելոներենով գրված արձանագրությունը[12] (*[I]Šameš–Baraky bēl–paẖati* [KUR]*Urašṭu* [KUR]*Melidu* «Շամեշ-Բարաքու՝ կառավարիչը Ուրաշտու երկրի, Մելիդու երկրի»), որտեղ Արմենիա երկիրը հիշատակված է Ուրաշտու (*Urašṭu*(անունով, քանի որ Շամեշ-Բարաքուից ընդամենը 14 տարի հետո հիշյալ Ուրաշտու երկրով անցնող Քսենոփոնը հունարենով գրած «Անաբասիս» աշխատությունում այն կոչում է Արմենիա[13]: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե Ուրաշտու կամ Ուրարտու պետությանը, որը վաղուց անկում էր ապրել, այլ նրա տարածքին, այսինքն՝ երկրին, որը բոլոր ժամանակներում հընդեվրոպական ու հնդիրանական լեզուներով կոչվել է Արմենիա: Ուրիշ Արմենիա չի եղել, որ հորինել են որոշ հետազոտողներ, պնդելով, թե ուրարտական պետության գոյության ժամանակ նրանից անկախ եղել է Արմենիա պետություն, որը գտնվել է Արմավիր քաղաքի շուրջ: Դա չի հաստատվում ոչ մի սեպագիր փաստով և լոկ ավանդություն է:

---

[11] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Ե., 1986, էջ 196, 386:

[12] **Unger E.,** *Urarṭu, Reallexikon der Vergeschichte, ed.* **Ebert M.**, *XIV, Berlin, 1928, S. 32.*

[13] **Քսենոփոն, Անաբասիս**, Ե., 1970, էջ 88-98:

Հերոդոտոսի պատմության վերոհիշյալ հատվածից հասկանալի է դառնում, որ Դարեհ I-ի թագավորության սկզբին, այսինքն՝ մ.թ.ա. 522 թ., Ուրարտու-Արմենիա երկիրը ապստամբել է Պարսկաստանի դեմ այն պատճառով, որ Դարեհ I-ը Ուրարտու-Արմենիային զրկել է սեփական թագավորությունից և վերածել պարսկական սատրապության, որի վրա սեփական թագավորի փոխարեն որպես կառավարիչ է նշանակել իր փեսա պարսիկ սատրապ Արտոքմեսին: Անշուշտ, սա է պատճառը, որ Ուրարտու-Արմենիան կենաց ու մահու պայքարի է դուրս եկել Պարսկաս- տանի դեմ:

Հաշվի առնելով, որ Հին Արևելքի առաջին հզոր պետությունը, այն է՝ Ասորեստանը, իր անկման դեմ պայքարել է շուրջ չորս տարի՝ մ.թ.ա 612-609 թ., ուստի Ուրարտուն էլ, որպես Հին Արևելքի երկրորդ հզոր պետություն, պիտի մաքառեր իր անկման դեմ: Պատմությունը նման պայքարի մասին է արձանագրում մ.թ.ա. 522 թվականին, երբ Ուրարտու-Արմենիան կռվում էր Պարսկաստանի դեմ:

Այսպիսով, Ուրարտու–Արմենիան իր գոյությունը պահպանել է մինչև մ.թ.ա 522 թ.: Ուստի, նրա վերջին թագավոր Ռուսա IV-ը կառավարել է մինչև մ.թ.ա. 522 թ.: Հետևաբար, եթե մինչև հիմա միայն հայտնի էր Ուրարտու–Արմենիայի վերջին թագավորներից Սարդուրի IV-ի կառավարման սկիզբը (մ.թ.ա. 635 թ.(, ապա այժմ պարզվում է նաև Ռուսա IV-ի թագավորության վերջը (մ.թ.ա. 522 թ.(: Փաստորեն, Ուրարտու-Արմենիայի թագավորներ Սարդուրի IV-ը, Էրիմենան, Ռուսա III-ը և Ռուսա IV-ը իշխել են մ. թ. ա. 635-522 թ.: Հիշյալ ժամանակաշրջանում Խորենացուն և Քսենոփոնին հասած ավանդությունները հիշատակում են նույն երկրի ու պետության թագավորներին, բայց ուրիշ անուններով:

Ըստ Խորենացուն հասած ավանդությունների[14]՝ Մեդիայի թագավոր Վարբակեսի (Ումաքիշթար-Կիաքսար) (625-585) օրոք, երբ ասսուրական պետությունը կործանվում է, «մեր երկրի», այսինքն՝ Ուրարտու-Արմենիայի թագավորն էր Պարույր Սկայորդին: Համաձայն Հերոդոտոսին հասած ավանդությունների[15]՝ Մեդիայի ու Լյուդիայի (Լիդիայի) միջև մղվող քառամյա պատերազմից հետո՝ մ.թ.ա. 585 թ., կնքված պայմանագրով Հալիս գետից դեպի արևմուտք ձգվող երկրներն անցնում են Լյուդիային, իսկ արևելք ընկածները՝ Մեդիային, որի մեջ է մտել նաև Ուրարտու-Արմենիա պետությունը: Ուրարտու-Արմենիան, ընկնելով Մեդիայի գերիշխանության տակ, դառնում է նրան հարկատու երկիր: Այդ ժամանակից սկսվում է Ուրարտու-Արմենիայի անկման փուլը, որը, ինչպես նշվեց, տևում է մինչև Դարեհ I-ի թագավորության սկիզբը, այսինքն՝ մինչև մ.թ.ա. 522 թ., երբ Ուրարտու-Արմենիան զրկվում է պետականու-թյունից և վերածվում պարսկական սատրապության:

Ըստ Երվանդունի արքայատոհմի մասին Խորենացուն հասած ավանդության՝ Աժդահակին հաջորդող Կյուրոս Մեծի ժամանակ Արմենիա–Ուրարտուի թագավորն էր Երվանդը[16], որն ուներ Տիգրան անունով որդի: Խորենացուն հասած

[14] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 120-123:

[15] Հերոդոտոս, նույն տեղում, էջ 28:

[16] **Մովսես Խորենացի**, էջ 122-124:

ավանդության արքայական ցուցակներում Երվանդին նախորդել է Մյուս Հայկակը[17], իսկ բուն շարադրանքում Կյուրոս Մեծին նախորդող Աժդահակ–Աստիագեսի ժամանակ Արմենիա–Ուրարտուում թագավորել է Տիգրանը, որի քույր Տիգրանուհին ամուսնացել էր Աժդահակ–Աստիագեսի (585-550) հետ: Տիգրանը, քրոջից իմանալով, որ Աժդահակ–Աստիագեսը դավեր է լարում, որ սպանի իրեն, նախահարձակ է լինում և սպանում նրան: Ժամանակի, տարածքի և պետականության առումով Մյուս Հայկակը և այս Տիգրանը նույն անձնավորություններն են: Նշված փաստերը հաստատում են, որ այս Տիգրանը (Մյուս Հայկակ) եղել է Երվանդի հայրը: Երվանդունի արքայատոհմի մասին Քսենոփոնին հասած ավանդության համաձայն՝ Կյուրոս Մեծի ժամանակ Արմենիա–Ուրարտուի թագավորն էր Արմենը, որի որդի Տիգրանը եղել է երկրի զորահրամանատարը և Կյուրոս Մեծին օգնել է, հավանաբար, Բաբելոնի վրա նրա մ.թ.ա. 539 թ. կատարած արշավանքի ժամանակ[18]: Այդ ավանդությունում խոսվում է Արմենի հոր մասին, որը շատ գանձեր է ունեցել[19], բայց նրա անունը չի հիշատակվել «Կյուրոպեդիայում»: Փաստորեն, Խորենացու հիշատակած Երվանդունի արքայատոհմի արքաներից Երվանդին համապատասխանում է Քսենոփոնի հիշատակած Արմենը, Խորենացու հիշատակած Երվանդի որդի Տիգրանին՝ Քսենոփոնի հիշատակած Արմենի որդի Տիգրանը, Խորենացու հիշատակած երվանդի հայր Տիգրանին (Մյուս Հայկակ)՝ Քսենոփոնի հիշատակած Արմենի հայրը: Ըստ Խորենացուն հասած ավանդությունների[20]՝ «Երվանդ–Արմենի որդի Տիգրանը» Ուրարտու-Արմենիայի վրա թագավորել է Դարեհ I-ից առաջ և Կյուրոս Մեծից հետո, այսինքն՝ մ.թ.ա. 529-522 թթ.: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Պարսկաստանում թագավորում էր Կամբյուսեսը (529-522): Խորենացուն հասած ավանդությունները տեղեկացնում են, որ Երվանդ-Արմենի որդի Տիգրանից հետո Ուրարտու-Արմենիայում այլևս թագավորներ չեն եղել, և նա եղել է այդ պետության վերջին թագավորը[21]:

Ակներև է, որ ըստ ավանդությունների տվյալների, Ուրարտու-Արմենիայի արքա «Երվանդ–Արմենի որդի Տիգրանի» թագավորությունը հասել է մինչև մ.թ.ա. 522 թ., երբ այդ երկիրը Դարեհ I-ի իշխանության սկզբում վերածվում է պարսկական սատրապության: Արդեն տեսանք, որ ըստ Դարեհ I-ի սեպագիր արձանագրությունների, Ուրարտու-Արմենիայի վերջին թագավորի՝ Ռուսա IV-ի իշխանությունը նույնպես հասել է մինչև մ.թ.ա. 522 թ.: Հետևաբար, Ուրարտու-Արմենիայի անկման ժամանակի հետ կապված սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավանդությունների հաղորդումներն ամբողջովին համընկնում են: Գրեթե համընկնում են նաև Սարդուրի IV-ի և ավանդություններից հայտնի մեզ հետաքրքրող թագավորներից առաջինի՝ Պարույրի ասպարեզ գալու ժամանակաշրջանները: Իհարկե, որոշ տարբերություն կա այդ հարցում: Պատճառն

---

[17] Նույն տեղում, էջ 122-123:

[18] **Քսենոփոն, Կյուրոպեդիա,** Ե., 2000, էջ 94-132:

[19] Նույն տեղում, էջ 94-132:

[20] **Մովսես Խորենացի**, էջ 122-123:

[21] Նույն տեղում:

այն է, որ Պարույրի թագավորության սկիզբն ավանդական է և պայմանական, իսկ Սարդուրի IV-ինը փաստված է սեպագիր արձանագրություններով և ավելի հավաստի է:

Փաստորեն, սեպագիր արձանագրություններում հիշատակված Սարդուրի IV-ը, Էրիմենան, Ռուսա III-ը, Ռուսա IV-ը և ավանդություններում նշված Պարույրը, «Երվանդ-Արմենի հայր Տիգրանը (Մյուս Հայկակը)», «Երվանդ-Արմենը», «Երվանդ-Արմենի որդի Տիգրանը» թագավորել են միևնույն տարածքում, ժամանակաշրջանում և պետությունում: Այդ հանգամանքը թույլ է տալիս սեպագիր արձանագրություններում հիշատակված Սարդուրի IV, Էրիմենա, Ռուսա III, Ռուսա IV թագավորներին համապատասխանաբար նույնացնել ավանդությունների Պարույր, «Երվանդ-Արմենի հայր Տիգրան (Մյուս Հայկակ)», «Երվանդ-Արմեն», «Երվանդ-Արմենի որդի Տիգրան» թագավորների հետ: Տարբերությունը նրանց անունների մեջ է: Դա բացատրվում է նրանով, որ դրանցից առաջինները հիշատակվել են սեպագիր արձանագրություններում, իսկ երկրորդները՝ ավանդություններում: Իհարկե, տարբեր անուններ կրող թագավորների այդպիսի համադրությունը զարմանք չպետք է առաջացնի, քանզի փաստեր կան, որ Ուրարտու-Արմենիայի ուրիշ թագավորներ էլ են կրել կրկնակի անուններ: Այսպես, օրինակ, Ռուսա I-ը կրել է նաև Ուեդիպրի (*[1]Uedipri)*[22], իսկ Ռուսա II-ը՝ Յայա (*[1]Ja-ia-a*)[23] անունը:

Ինչպես վերևում ասվեց, Խորենացուն և Քսենոփոնին հասած ավանդությունները վկայում են, որ Պարույրը թագավորել է Վարբակես-Ումաքիշթար-Կիաքսարի ժամանակ, այսինքն՝ 625-585 թթ., «Երվանդ-Արմենի հայր Տիգրանը (Մյուս Հայկակ)»՝ Աժդահակ-Աստիազեսի՝ 585-550 թթ., «Երվանդ-Արմենը»՝ Կյուրոս Մեծի՝ 550-529 թթ., «Երվանդ-Արմենի որդի Տիգրանը»՝ Կամբյուսեսի՝ 529-522 թթ.: Այդ նույն ժամանակագրությունները կարելի է վերագրել նաև սեպագիր արձանագրություններում հիշատակված Ուրարտու-Արմենիայի թագավորներ Սարդուրի IV-ին, Էրիմենային, Ռուսա III-ին, Ռուսա IV-ին, միայն այն տարբերությամբ, որ Սարդուրի IV-ի թագավորությունը, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների, սկսվել է մ.թ.ա. 635 թ.: Անշուշտ, այդ նույն ժամանակաշրջանից է թագավորել նաև Պարույրը, քանի որ Սարդուրի IV-ի թագավորության սկիզբը, ինչպես ընդգծվեց վերևում, հիշատակված է սեպագրություններով և իրական է, իսկ Պարույրինը՝ ավանդական է ու պայմանական: Ուստի կարելի է ասել, որ Սարդուրի IV-ը թագավորել է մ.թ.ա. 635-585 թթ., Էրիմենան՝ մ.թ.ա. 585-550 թթ., Ռուսա III-ը՝ մ.թ.ա. 550-529 թթ., Ռուսա IV-ը՝ մ.թ.ա. 529-522 թթ.[24]:

Մատնանշված փաստերը ցույց են տալիս, որ Ուրարտու–Արմենիայի պատմության պարբերացման երրորդ փուլը տևել է մինչև մ.թ.ա. 585 թ., որին

---

[22] *УКН, N 267, стк. 5.*

[23] **Knudtzon J.,** *Assyrische Gebete and den Sonnengott, Leipzig, 1893, I, &.48; АВИИУ, N 68 (а).*

[24] **Սարգսյան Դ. Ն.,** Բիբլիական «Արարատի թագավորությունը» ըստ սեպագիր արձանագրությունների (Նոր-դար, Ե., 2003, N 4), էջ 257-260:

հաջորդել է այն փուլը, երբ Ուրարտու–Արմենիան կորցնում է իր անկախությունը և անցնում Մեդիայի գերիշխանության տակ՝ դառնալով նրան հարկատու երկիր: Ուրարտու–Արմենիայի պատմության պարբերացման երրորդ փուլը համընկնում է այդ պետության թագավորներ Ռուսա I-ի (735-713), Արգիշթի II-ի (713-685), Ռուսա II-ի (685-645), Սարդուրի III-ի (645-635), Սարդուրի IV-Պարույրի (635-585) կառավարման ժամանակաշրջանի հետ: Այս փուլը Ուրարտու–Արմենիա պետության վայրէջքի շրջանն էր: Թեև այս փուլում իշխած որոշ թագավորներ փորձում էին նվաճողական արշավանքներով փրկել իրենց պետության քաղաքական հեղինակությունն արտաքին աշխարհում (օրինակ՝ Ռուսա I-ը, Արգիշթի II-ը, Ռուսա II-ը), բայց իզուր: Ժամանակն իր վճիռը կայացրել էր, և Ուրարտու–Արմենիայի վայրէջքն անդառնալի էր:

Ուրարտու–Արմենիայի պատմության պարբերացման չորրորդ փուլը, ինչպես ընդգծվեց վերևում, սկսվում է Մեդիայի ու Լյուդիայի (Լիդիայի) միջև մ.թ.ա. 585 թ. կնքված պայմանագրով, երբ Ուրարտու-Արմենիան անցնում է Մեդիայի գերիշխանության տակ, կորցնում է իր քաղաքական անկախությունը, դառնում Մեդիային հարկատու երկիր, թուլանում, բռնում անկման ճանապարհը: Թեև Կյուրոս Մեծի ժամանակ Երվանդ-Արմենը, իսկ Դարեհ I-ի օրոք ժողովուրդը պայքարի են ելնում անկախության համար, բայց դա նրանց չի հաջողվում: Այս փուլը համընկնում է Ուրարտու-Արմենիայի թագավորներ Էրիմենա- «Երվանդ-Արմենի հայր Տիգրանի (Մյուս Հայկակ)», Ռուսա III-«Երվանդ-Արմենի» և Ռուսա IV-«Երվանդ-Արմենի որդի Տիգրանի» իշխանության ժամանակաշրջանի հետ: Դա Ուրարտու–Արմենիա պետության անկման փուլն էր:

Ուրարտու-Արմենիայի պատմության պարբերացման չորրորդ փուլի թագավորների կամ այդ պետության վերջին երեք թագավորների՝ Էրիմենայի, նրա որդի Ռուսա III-ի և վերջինիս որդի Ռուսա IV-ի թագավորության սկզբից, այսինքն՝ մ.թ.ա. 585 թվականից, երբ ավարտվում է Մեդիայի ու Լիդիայի միջև մղվող քառամյա պատերազմը, ու կնքվում հաշտության պայմանագիր, որով Հալիս գետից դեպի արևմուտք գտնվող երկրները անցնում են Լիդիայի գերիշխանության տակ, իսկ դեպի արևելք ընկածները, որոնց թվում նաև՝ Ուրարտու-Արմենիան, մտնում են Մեդիայի գերիշխանության տակ, դառնում նրա հարկատուները, Ուրարտու-Արմենիայի արքայական տոհմը փոխվում է: Այս ենթադրությունն ամենից առաջ հաստատվում է այն կարևոր փաստով, որ Ուրարտու-Արմենիայի արքաների ցուցակում Էրիմենան հիշատակվում է Սարդուրի IV-ից հետո, այսինքն՝ Էրիմենայի հայրը պետք է լիներ Սարդուրի IV-ը: Բայց Էրիմենայի սեպագիր արձանագրությունում, ուր աղարտված է նրա հայրանվան վերջին մասը, և պահպանված է միայն նրա առաջին մասը, այդ հայրանունը սկսվում է ոչ թե «Սար» վանկով, այլ «Ար» կամ «Ռու» վանկով.

«(Երեսի կողմ)- 1) *LUGAL-še a-li ti-i-e* 2) ^{D}*Hal-di-ERUM-di* ^{L3}*KUG*^{MEŠ} 3) ^{I}*A-lu-a-ni-ni* ^{L3}*MU*^{MEŠ} 4) *za-ni-da-bi TI DINGIR* 5) ^{SAL}*si-la-a* 6) ^{I}*Mu-i-da-a-i* ^{L3}*MU* 7) *MIN-e ma-nu-O-bi* 8) *E.GAL-ni hi-ni-e* 9) *LUGAL- še bi-du-O-ni* 10) ^{I}*A-lu-a-ni-gi* ^{L3}*MU* 11) *mi-i a-lu-šn-i-ni ....* (հակառակ կողմ).- 1) *bi-di a-ri-e-e* 2) *a-li-O-ni*

(Կնիք)

[1]E-ri-me-na-ni [1]A[r…] (կամ՝ *[1]R[u…]*»[25]

«(Երեսի կողմ)- Ահա ինչ է (ասում) թագավորը՝ ասա Խալդիբուրային՝ «փողի մարդուն», Ալուանի «հացթուխի» («խոհարարի») մասին. սիրելի լինի քո կյանքը աստծու իսկությամբ: Մի աղջիկ, որը Մուիդա «հացթուխին» («խոհարարին») էր, ես թույլ տվեցի նրան կին դառնալ: Պալատից այժմ թագավորը նրան ետ վերադարձրեց Ալուանի «հացթուխին» («խոհարարին»): Անհետաձգելիորեն (Հակառակ կողմ)-վերադարձրու, տուր:

(կնիք)

Էրիմենա Ա[ր …] (կամ՝ Ռ [ու …])»:

Այս շատ կարևոր փաստը հաստատում է, որ Էրիմենայի հայրը ոչ թե Սարդուրի IV-ն է, այլ մի ուրիշ անձնավորություն, որը արքա չի եղել, և նրա անունը չի հիշատակվել Ուրարտու-Արմենիա պետության արքաների ցուցակում: Ուրեմն, Էրիմենայով սկսվել է Ուրարտու-Արմենիայի բոլորովին նոր արքայատոհմ: Ի դեպ, ինչպես վերևում տեսանք, Ուրարտու-Արմենիայի արքայատոհմը փոխվել է նաև այդ պետության առաջին թագավոր Արամեից հետո, երբ իշխել է Լութիպրիի որդի Սարդուր I-ը:

Փաստերը հաստատում են, որ Ուրարտու-Արմենիայի պատմության պարբերացման չորրորդ փուլում առաջացած նոր արքայատոհմն ունեցել է հայկական ծագում: Այդ փաստերից մեկը կապված է Ուրարտու-Արմենիայի վերջին 3 թագավորների հետ, որոնք հիշատակված են ոչ միայն սեպագիր արձանագրություններում, այլև ժողովրդական ավանդություններում, այդ թվում՝ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» և Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունների մեջ տեղ գտածներում: «Կյուրոպեդիայում»[26] հիշատակված այդ ավանդական թագավորներն են Արմենը (550-529), նրա որդի Տիգրանը (529-522) և Արմենի հայրը (585-550), որի անունը չի հիշատակվել «Կյուրոպեդիայում»: Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակված թագավորներն են Երվանդը, նրա որդի Տիգրանը և Երվանդի հայր Տիգրանը (Մյուս Հայկակ)[27]: «Կյուրոպեդիայում» ուշագրավ է այն, որ Արմեն անվան հիմքում ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, որով ընդգծվում է այդ անունը կրող Արմեն (Երվանդ) թագավորի հայկական ծագումը: Բնականաբար, նման ծագում են ունեցել նաև նրա հայրը և որդին՝ Տիգրանը: Հավանաբար, «Կյուրոպեդիայի» և Խորենացու «Հայոց պատմության» մեջ տեղ գտած ժողովրդական ավանդություններում հիշատակված Ուրարտու-Արմենիայի վերջին երեք թագավորների նման սեպագիր արձանագրություններում հիշատակված այդ պետության վերջին երեք արքաները կամ դրա պատմության չորրորդ փուլի թագավորները նույնպես ունեցել են հայկական ծագում: Թերևս դա է պատճառը, որ որոշ հնչյունափոխությամբ հանդերձ՝

---

[25] **Дьяконов И. М.,** *Урартские письма и документы, М.–Л, N 3;* ***Меликишвили Г. А.****, УКН, N 457.*

[26] **Քսենոփոն, Կյուրոպեդիա,** էջ 94-175:

[27] **Մովսես Խորենացի,** էջ 120-132:

սեպագիր տեքստերում հիշատակված Էրիմենա անվան հիմքում ակներևաբար ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես նկատվեց Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատության մեջ տեղ գտած ավանդությունում հիշատակված Արմեն անվան առիթով: Սրանով ընդգծվում է, թե ավանդական Արմենի նման սեպագիր արձանագրությունների Էրիմենան ևս ունեցել է հայկական ծագում:

Փաստերից հաջորդը մատնանշում է, որ «արմ» արմատով կազմված անունը Էրիմինայից առաջ սեպագիր արձանագրություններում հիշատակված Ուրարտու-Արմենիայի արքայատոհմի անդամներին անծանոթ չի եղել: Ինչպես վերն ընդգծվեց, նման արմատով է կազմվել այդ պետության առաջին թագավոր Արամեի անունը, որը, ըստ Խորենացու «Հայոց պատմության» տվյալների, ունեցել է արմենական կամ հայկական ծագում: Ըստ այդ տվյալների՝ նման ծագում է ունեցել նաև Արամեն, որը, դարձյալ ըստ Խորենացու «Հայոց պատմության» տվյալների, Ուրարտու-Արմենիա պետության դինաստիական կառուցվածքի մեջ[28] ստեղծել է հայկական արքայատոհմ: Արամեից հետո քաղաքական ասպարեզ եկած Սարդուրի I-ը հիմադրել է արմեններից էթնիկապես տարբեր ուրարտների դինաստիա: Այս փաստն իր հերթին հաստատում է, որ Էրիմենա անվան հիմքում, հիրավի, ընկած է «արմ» արմատը, որով ընդգծվում է այդ թագավորի անվան հայկական ծագումը: Նշված փաստն իր հերթին փաստում է, որ ավանդական Արմենի նման սեպագիր արձանագրությունների Էրիմենան էլ է ունեցել հայկական ծագում: Բերված փաստերից ելնելով՝ կարելի է ասել, որ ոչ միայն Էրիմենան է ունեցել հայկական ծագում, այլև Էրիմենայի որդի Ռուսա III-ը և վերջինիս որդի Ռուսա IV-ը: Վերջին երկուսը թեև սեպագիր տեքստերում ավանդաբար կրել են ուրարտական անուններ, բայց Քսենոփոնին և Խորենացուն հասած ժողովրդական ավանդություններում դրանք հայկական անուններ են կրել[29]:

Ուրարտու-Արմենիայում Սարդուր IV-ից (635-585) հետո դինաստիական փոփոխություն կատարվելու գաղտնիքը պայմանավորված է նրանով, որ, ինչպես ընդգծվեց վերևում, երբ Ուրարտու-Արմենիան անցնում է Մեդիայի գերիշխանության տակ, դառնում նրան հարկատու երկիր, հավանաբար նրա գործող դինաստիան, որն ունեցել է ուրարտներ ցեղի ծագում, հակադրվել է այդ որոշմանը: Բնականաբար, մեդական պետությունը տապալել է այդ արքայատոհմը և հաստատել նորը, որն ունեցել է ոչ թե ուրարտներ ցեղի ծագում, այլ հայկական, քանի որ սեպագիր փաստերի հավաստմամբ այդ ժամանակ Ուրարտու-Արմենիայի բնակչության մեջ արմենները կամ հայերը քանակապես խիստ գերակշռում էին ուրարտներին: Այս հանգամանքն Էրիմինայի արքայատոհմի հայկական լինելը հաստատող գլխավոր փաստերից է:

---

[28] **Սարգսյան Դ. Ն.,** Ուրարտական պետության հայկական ծագման հայտնաբերումը ըստ սեպագիր արձանագրությունների և բարձրաքանդակների (Նորք, 2003, N 3, էջ 174-177):

[29] **Սարգսյան Դ. Ն.,** Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակված ավանդության հայկական պետական կազմավորումը կամ Արմենիա պետությունը ըստ սեպագիր արձանագրությունների, (Նոր-Դար, 2005, N 1, էջ 3-15):

Ուրարտու–Արմենիայի պատմության պարբերացման չորրորդ փուլի թագավորները կամ այդ պետության վերջին երեք թագավորները՝ Էրիմենան, Ռուսա III-ը և Ռուսա IV-ը, որոնք ունեին հայկական ծագում, բնականաբար, ստեղծել են հայկական դինաստիա Ուրարտու-Արմենիայի դինաստիական կառուցվածքի մեջ: Ինչպես ժամանակի, տարածքի ու պետականության, այնպես էլ էթնիկական նույնությունը թույլ է տալիս սեպագիր արձանագրությունների Էրիմենայի արքայատոհմը նույնացնել ժողովրդական ավանդություններում հիշատակված հայկական ծագում ունեցող Երվանդունի արքայական հարստության հետ: Տարբերությունը միայն այդ արքայատոհմերի արքաների անունների մեջ է: Իսկ դա զարմանք չպետք է առաջացնի, քանի որ, ինչպես վերևում ընդգծվեց, դրանցից Էրիմենայի արքայատոհմի արքաները հիշատակվել են սեպագիր արձանագրություններում, իսկ Երվանդունիները՝ ժողովրդական ավանդություններում: Այս կապակցությամբ ուշագրավ է, որ Երվանդունի արքայատոհմի անունների մեջ տարբերություն գոյություն ուներ նույնիսկ Քսենոփոնին ու Խորենացուն հասած ժողովրդական ավանդություններում: Դրանցում ընդհանուր է միայն վերջին Տիգրանի անունը, իսկ մյուսների անունները տարբեր են: Օրինակ՝ Խորենացուն հասած ժողովրդական անուններում վերջին Տիգրանի հայրը կոչվում է Երվանդ, իսկ Քսենոփոնին հասած ավանդությունում՝ Արմեն անունով: Նույնիսկ Երվանդունիների անունների մեջ տարբերություն կա Խորենացուն հասած ժողովրդական ավանդություններում: Օրինակ՝ արքայական ցուցակներում, ինչպես ասվել է վերևում, Երվանդին, որը Արմենիա–Ուրարտուում թագավորել է Կյուրոս Մեծի ժամանակ, նախորդում է Մյուս Հայկակը, իսկ այդ ցուցակներից դուրս Խորենացու «Հայոց պատմության» ընդարձակ շարադրանքում Կյուրոս Մեծին նախորդող Աժդահակ–Աստիագեսի ժամանակ Արմենիա–Ուրարտուի թագավորը Տիգրանն է, որը սպանում է Աժդահակ–Աստիագեսին: Էլ ուր մնաց նույնություն որոնել սեպագիր արձանագրություններում և ժողովրդական ավանդություններում հիշատակված արքաների անունների միջև: Այստեղ կարևոր է ժամանակի, տարածքի, պետության և էթնիկական նույնությունը, որը գոյություն ունի և հաստատում է սեպագիր արձանագրությունների՝ Էրիմենայի արքայատոհմի ու ժողովրդական ավանդությունների Երվանդունի հարստության նույնությունը:

ГЛАВНЫЕ ЭТАПЫ ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ УРАРТСКОГО ГОСУДАРСТВА

САРКИСЯН Д.Н.

Резюме

Периодизация урартского государства охватывает четыре главных этапа.

Первый этап совпадает с выходом этого государства на политическую арену, когда его коренные территории объединяются в единое

государство. На этом этапе в Урарту правили Араме (859-832) и Сардури I (832-822). Второй этап совпадает с захватническими походами Урарту, в результате которых было захвачено около 130 стран. Этот этап характеризуется подъемом. В этот период в Урарту правили Ишпуини (822-820), Менуа (810-786), Аргишти I (786-764) и Сардури II (764-735). Третий этап относится к последнему периоду царствования Сардури II. На этом этапе ассириский царь Тиглатпаласар III (745-727) в 743г. и 735г. до н.э. одержал победу над Урарту, в результате которой государство Урарту потеряло многие свои территории на юго-востоке и юго-западе. Тем самым Ассирия восстановила свою гегемонию в Передней Азии. С этого периода – периода правления Русы I (735-713) начинается упадок Урарту, когда царь Ассирии Саргон II (722-705) в 714 году до н.э одержал победу над Урарту. Этот период длился до 585 г. до н.э. На этапе упадка после Русы I в Урарту царствовали Аргишти II (713-768), Руса II (685-645), Сардури III (645-635), Сардури IV-Паруйр (635-585).

С 585 г. до н.э.начинается четвертый этап истории Урарту, когда государство Урарту или Армения становится подвластным Мидии. Согласно клинописным надписям, в этот период в Урарту-Армения царствовала династия Эримена, а по народным традициям – династия Ервандуни. Обе династии имели армянское происхождение. Четвертый этап завершился 522 годом до н.э., т.е. падением Урарту-Армения. На этом этапе (этапе падения) истории Урарту-Армении царствовали: Эримена- “отец Ерванд – Армена Тигран” (585-550), Руса III – “Ерванд-Армен” (550-529), Руса IV – “сын Ерванд-Армена Тигран” (529-522).

На основании этнического и территориального сходства можно заключить,что династия Эримена в клинописных надписях и династия Ервандуни в народных традициях идентичны. Династия Эримена-Ервандуни, как и династия Араме, имела армянское происхождение. Она правила в 585-522 гг. до н. э.